


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . 6 "
ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
Իրկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ծանոցման տողը
20 սանդիւն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԸՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Iravouk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս
չեմ տրոշիր

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

«Իրաւունք»ի ընթերցողները տեղեկութեան հետաքրքրութեան մէջ պահող մեր այս քերթըր քեզ գրքի վերածելուն նպատակ չունենալով, բայց ամէն կողմէ մեզ ուղղութեամբ խնդրանքներէն ստիպեալ, սկսած ենք զանի իրար գիրք տպագրել, նկատելով քէ ատով մեր ազգային յեղափոխական կեանքին մէջ յաճախող դեպքերու շահեկան ու խիստ հետաքրքրաշարժ հաշտութեան մը ընթացքը կը շարունակուի ընթացակարգներու, որոնց մեծագոյն մասին առիթ եւ դիտարկելու պակասած է «Իրաւունք»ի ներկայ տարւոյ քիւնքը ամբողջովին հաշտելու:

Գիրքը երկու հատորներէ կը բաղկանայ եւ արդէն կէս տպագրութեամբ ըլլալով, միւս կէսին ալ տպագրութեանը փութով առաջ կը տարուի. այսինքն երկու հատորները քանի մը շաբաթ յետոյ արդէն հրատարակ ելա՞նք պիտի ըլլան:

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԸ Զ ՖՐԱՆՔ Է

Ստանալ փափաքողները այդ 2 ֆրանքը այժմէն խնայարարութեամբ դիտելով կրնան վստահ ըլլալ քէ ԹԻԱՊԱՐՏԸՐԻ կազմութեամբ երկու հատորները քիչ առնենէն կատարուի: Այս պատիւ գումարը մեզ հասցնելու դիտարկեալ համար կը յայտարարենք քէ փոխարէնը ամէն երկրի նամակադրով կը կողմնակից 10 0/0 զեղչով:

ՕՐՈՒԱԽՆ ՀԱՐՑԸ

Շուշիի մէջ ժամհարեանի առեւտանքան գէպին յաջորդեց Զմիւռնիոյ մէջ Պալեօղեանի սպանումը: Առաջինը իր բարեբարութեամբ հանրածանօթ հայ հարուստ մը, եւ երկրորդը եթէ ոչ բարեբար մը, գոնէ ազգային հաստատութիւնները բաւական առատօրէն նպաստաւորող եւ իր պատկանած ազգին պատուաբեր հայ վաճառական մըն էր:

Այս առեւտանքումը եւ սպանումը, ինչպէս ցարդ ստացուած լուրերը ցոյց կուտան, հայ յեղափոխութեան համար բռնի դրամ պահանջելէ առաջ եկած են: Տփղիսի եւ Պոլսոյ հայ թերթերը, որչափ որ կը ներէ իրենց ճշուած կացութիւնը, զայրոյթ միայն կը յայտնեն: Իսկ արտասահմանի մամուլը՝ որ ամէն քաղաքական ու ազգային խնդիրներու եւ գէպերու մասին իր կարծիքը յայտնելու եւ անկաշկանդ կերպով դատաստան բնելու ազատութիւնը կը վայելէ, գեռ իր վճիռը չէ տուած—մեր խօսքը կու-

սակցական նեղ հայեացքներով դատաստան ընդունելու մասին չէ—հետեւաբար այս յօդուածով մենք կանխած պիտի ըլլանք մեր ազատ կարծիքն յայտնելու, բայց զմեզ անխալ համարելու յաւակնուած թիւնը առանց ունենալու:

Մեր ընթերցողներէ շատերը անշուշտ յիշելու են քանի մը տարի առաջ Պոլսոյ մէջ Տիգրան Գա. րակէօղեանի վրայ կատարուած սպանութիւնը: Այս մեծահարուստ հայը, յեղափոխականաց հարուածին կարժանանար ասոնց դրամ չը տալուն պատճառաւ: Այդ գէպի երկար ուսումնասիրութիւնը, Տ. Արքիարեանի գրիչէն ելած, պահ մը համոզում գոյա. ցոյց արտասահմանի մէջ թէ Տիգրան Գա. րակէօղեան արժանի էր այդ պատժին, քանի որ ինք իր հարուստ գանձէն փոքրիկ մաս մը հայ ազգին բարօրութեանը սահմանել մերժած էր, պատրուակելով թէ ոչ Պոլսոյ մասնաճիւղին եւ ոչ Լոնտրայի Հնչակեան կեդրոնին վրայ վստահութիւն ունի: Այո՛, այն ատեն ամէն բերան կը դատապարտէր Գա. րակէօղեանը իբր կծծի,

իբր իր ազգի թշուառութեանը անկարելից մէկը:

Բայց քիչ վերջը այս անուշաբան արձակող հայ ժողովուրդին ապշութիւնը մեծ եղաւ, երբ այդ դատապարտուած Գա. րակէօղեանի գրած կտակը մէջտեղ ելաւ, որը 80 հազար ոսկի կը նուիրէր հայ տղաներէն: Իսկ ո՛րչափ աւելի հիացում պատճառեց նոյն Գա. րակէօղեանի ժամանակին յարուցած անվստահութեան խնդիրը, երբ գինը դատապարտողները սկսեցին զիրար զոգ հռչակել հատուկապէս եւ մէջտեղ ելաւ թէ կռուող Զեյթունցիին համար հաւաքուած դրամները Պոլսոյ եւ Լոնտրայի մէջ անհետացեր են:

Սակայն ալ գործը գործէն անցած էր ու Գա. րակէօղեան մեռած: Իսկ անոր կտակած 80,000 ոսկիէն հազիւ 20,000ը ահագին դժուարութիւններով իր եղբոր ձեռքէն կարելի եղաւ խել: Որով Տիգրան Գա. րակէօղեանի տարածած մահը—կարծեմ սխալ չէ բոլոր թէ՛ ազգը 60,000 ոսկիէ վրէժեց, եւ այս միմիայն Գա. րակէօղեանի յարուցած անվստահութեան խնդիրը սխալ, իբր դրամ չը տալու պատրուակ, ըմբռնուելուն պատճառաւ:

Իր ողջութեանը կծծի ու ժլատ ճանչցուող Տիգրան Գա. րակէօղեանի այս գէպը իր գլխաւոր պարագաներով յիշելի ետք, երբ վերադառնանք ժամհարեան եղբայրներուն, որոնք հայ յեղափոխական կազմակերպութեան մը կողմէ մահուան դատապարտուել են, ինչ վճիռ կարելի է տալ այս դատապարտութեան: Ահա օրուան հարցը: Ժամհարեանը Տիգրան Գա. րակէօղեանի նման կծծի մըն ալ չէ. այլ ընդհակառակը նշանաւոր բարեբար մըն է, որ գեռ վերջին ամիսներու մէջ կէս միլիոն ֆրանք ծախսելով հիւանդանոց մը նուիրեց իր ծննդավայրին, Մարաշի մէջ 200 որբ կը խնայէ եւ անցեալ ամսոյ մէջ ալ, բացառիկ կերպով, 10 ոսկի զրկած էր այդ որբերուն շաքար հրամցնելու համար: Արդ, կարելի՞ է կարծել թէ այս աստիճանի ազգային բարեբար մը, այսչափ զգալուն մէկը երբեք չը մտածէ իր

ազգին վիճակը հիմնովին բարեփոխելու միջոցներուն վրայ: Կարելի՞ է հաւատալ թէ ժամհարեան մը ազգային դատին յաղթութեանը համար դրամ տալ չուզէ:

Այս կարծիքը եւ այս հաւատքը գոյացնել անբնական եւ անտրամաբանական կը թուի մեզ:

Ժամհարեանի նման ազգային ու բարեգործական հաստատութեանց եւ զրկանքի մատնուածներու բարեբարող մեր կարգ մը հարուստներուն դէմ այդ օրինակ անուշաբան արձակող մը համոզումով ոչ թէ միայն ապե. րախտութիւն է, այլ նաեւ անարդարութիւն:

Իրենց շուրջը բարիքներ սփռող կարգ մը հայ հարուստներու մեր պատեհական յեղափոխականներուն դրամ տալ չուզելուն բուն պատճառները նախ փնտռելու եւ զանոնք արմատախիլ ընելու ենք:

Ոչ թէ միայն հայ հարուստներուն, այլ նաեւ իրենց անցեալ գործունէութեամբ ու անձնութիւնով թեմամբ ամբողջ հայ ժողովուրդին համակրանացը արժանացող շատ մը ազգային ու յեղափոխական գործիչներու յեղափոխութենէ ուժացումը գլխաւորապէս սա երկու պատճառներուն կը վերագրուի: 1) Կուսակցական երկպառակութիւնը կամ անմիաբանութիւնը, եւ 2) գործունէութեան յախուռն եղանակը: Բայց առաջինին վերանայլը երկրորդը ինքնին կը կարգադրուի. որովհետեւ եթէ կուսակցութեանց մէջ միութիւն եւ համերաշխութիւն գոյանայ, գործունէութեան եղանակն ալ միացող կուսակցութիւններու համախորհուրդ եւ փորձառական կարգադրութեամբ կ'որոշուի. որով ալ պէտք չմնար որ այսինչ կամ այսինչ կուսակցութիւնը ինքզինք գործունէայ ցուցնելու համար անխորհուրդ եւ անիմաստ ցոյցեր ընէ, որոնք գրեթէ միշտ ողբալի հետեւանքներ ունեցած են:

Երբ ուժացնող ու գայթակղեցնող այս պատճառները մէջ տեղէ վերնան եւ յեղափոխական կուսակցութիւնները վերջնական Միոյն քիւնք հռչակեն, կը հաւատանք թէ

չատ երկար ժամանակի չպիտի կարծիք ամեն դասակարգի ազգայիններու յեղափոխութեան դրօշին տակը հաւաքուիմը. և այն ատեն յողափոխական իրազօր պաշտօնեան ճակատաբաց երբ հայ հարուստին ներկայանայ, այսօրուան պատրուակները իր առջեւ չպիտի դրուին, ժամհարեաններ չպիտի մերժեն և աներկբայ ինքնաբերաբար ու ձեռքի տակէ իրենց առատ նպաստներով պիտի քաջալերեն իսկ Սակայն միեւնոյն ատեն թերեւս դեռ ցանց ցառ դասակարգ մըն ալ գտնուի դրամ տալ չուզող, բայց այդ դասակարգին մէջ ժամհարեաններ ու առնեց նման բարերարողներ չպիտի ըլլան անշուշտ:

ԳՈՒՐՈՒՅՑ

ԿԻՆԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կինիկիոյ Կաթոլիկոսական Ընտրութեան վեցանուն ցանկը Բ. Դուռէն Պատրիարքարան վերադարձուելուն պէս, Պատրիարքը իրեն ժողովոյ անդամները գումարումի հրաւերած էր: Հոկտեմբեր 10ին, Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ նիստ գումարելով, որուն չին մասնակցած Կրօն. Ժողովոյ երկու հանրաձայնութեամբ Ատենայեանները, Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննէսեան ու Վահրամ Եպս. Մանկունի, իրեն ժողովը նկատողութեան առերէն Բ. Դուռն մէկ ծանուցադիրը, որ վեցանուն ցանկէն երեք անուն ընտրելով միայն երեքը ընտրելի ցոյց տուած է. ուստի Ատենայի Ընտր. Ժողովը իր առաջիկայ նիստին մէջ քուէարկութիւնը սա երեքին վրայ պիտի կատարէ: Բարթողիմէոս Արքեպիսկոպոս Չամչեան, Սահակ Եպս. Ուսպեան, Երուսաղէմայ վանքին Լուսարարապետ Ե. Մովսէս Եպս. Կէօմարի, քանի, Պրիէճիկի Առաջնորդ ու

Նախագահ Ատենայի Ընտրողական Ժողովոյ:

Արդ, ինքնին կը տեսնուի թէ, Դուռն կողմանէ արուած բացորոշ հրահանգներու համեմատ և ոչ երբէք Ընտրողական Ժողովոյ կողմէն համաձայն կը կատարուի այս ընտրութիւնը: Վասն զի Ընտրողական Ժողովը իր քուէներուն մեծամասնութիւնը (44 քուէ) Կեսարիայի Առաջնորդ Տրդատ Եպս. Պալիանի տուել էր, որը ուսումնասէր ու գործունէ այս տիպար եկեղեցականի մը համար կը վայելէ: Յետոյ կուգար Իզմիտի Առաջնորդ Ստեփաննոս Եպս. Յովակիմեան, որ 42 քուէ չահեր էր: Բարթողիմէոս Եպս. 40 քուէ չահած է. իսկ Սահակ ու Մովսէս Եպիսկոպոսները վեցանուն ընտրեալներու վերջիններն են:

Դատական նախարարութիւնը արդէն հետադրով հրահանգ տուած է Ատենայի Կուսակալութեան, որպէսզի կաթոլիկոսական ընտրութիւնը Պատրիարքարանի ցոյց տուած ընտրելիներուն վրայ կատարուի. տարակուս չկար ուրեմն թէ, Ատենայի Ընտրողական Ժողովը, Դուռն որոշումին համակերպելով, իր երկրորդ ու վերջին նիստին մէջ Կինիկիոյ Աթոռին Ընտրեալ պիտի հռչակէր վերադրեալ երեք եպիսկոպոսներէ մին, հաւանաբար Բարթողիմէոս Եպիսկոպոսը: Սակայն, իր մոլեռանդ թըրքափրոթեամբը համբաւաւոր այս եկեղեցականը, Դուռն կաթոլիկոսական ընտրելին, իրաւ համարէն հայութիւնը ու զինքը մտէն ծանցողները մասնաւորապէս կը շուարեցնէ, երբ յանկարծ Կաթոլիկոսական ընտրելիութեանէ իր հրաժարականը կը մատուցանէ միանգամայն Պատրիարքին ու Ատենայի Ընտրողական Ժողովոյն, իր անձին տկարութիւնն ու «անբաւականութիւնը» (այսպէս) մէջ բերելով: Արդարեւ, այս անակնկալ հրաժարականը անբացատրելի կը մնայ նախ Դուռն համար, որ այսպէսով իր ամենին սիրելի, ամենէն մօլի պաշտպանեալներէն մին կը կորսնցնէ, ու յետոյ հայ ժողովուրդին համար, որ իր ներկայ վիճակին մէջ աներկբայ այս եկեղեցականին ձախող ընտրու-

թիւնը նոր աղէտ մը պիտի նկատէր: Սակայն մի՞ գուցէ Բարթողիմէոս ինքզինքը պատրիարքութեան վերապահէ (Աստուած պահէ մեզ այդ տեսակ փորձանքէ մը):

Պատրիարքը արդէն Բարթողիմէոս Եպիսկոպոսի հրաժարականը հետագայով Ընտրողական Ժողովոյ հաղորդած ըլլալով, այս վերջինը ուրեմն իր քուէները պիտի տայ կամ Սահակ Եպիսկոպոսի (որ առաջին քուէարկութեան միջոցին 37 քուէ չահեր էր) կամ թէ Մովսէս Եպիսկոպոսի որ 35 քուէ չահած էր:

Հաւանական է որ Կաթոլիկոս ընտրուի Երուսաղէմի Լուսարարապետ Սահակ Եպս. Ուսպեանը, վասն զի ոչ միայն Ընտրողական նախորդ ժողովոյ Պատրիարքարանի կողմանէ իբր Գործադիր Տեսուչ մասնակցելուն առթիւ, անցեալով ալ անբասիր, Ատենայի մէջ մեծ ժողովողականութիւն վայելից ու կրցաւ կաթոլիկոսական նախորդ քուէարկութեան միջոցին քուէներու ստուար մեծամասնութիւնը իր անձին շուրջ հաւաքել, այլ մանաւանդ երկրորդ ընտրելին Պրիէճիկի Առաջնորդ Մովսէս Եպս. Կէօմարի, Ընտրողական Ժողովոյ մէջ Ազգային Կեդրոնական Վարչութեան արդի պատուիրակը, հազիւ երեք տարիէ ի վեր Եպիսկոպոսական աստիճանին բարձրացած, Կինիկիոյ հայութեան բոլորովին անձանթ զէմք մ'է. այս պատճառաւ նախորդ քուէարկութեան մէջ անոր անձը աննշմար անցեր էր, ու հաւանական չէ որ, հակառակ իր պաշտօնին բերմամբ ստացած նոր հռչակին, Ատենայի Ընտրողական Ժողովը Կինիկիոյ Աթոռին Կաթոլիկոս ընտրէ նկարագրով ու գործունէութեամբ իրեն անձանթ եկեղեցական մը: Բայց միւս կողմէ կասկած կայ թէ Ուսպեան Եպիսկոպոս այս անգամ ալ հրաժարի. այդ պարագային վերջնական ընտրելի Տ. Մովսէս Եպիսկոպոս կը մնայ:

ՕՐՈՒՆԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Տարիէ տարի Անգլիա յար յետադիմելու վրայ է. ահա աղաղակը՝ զոր նոյն ինքն անգլիացի հայրենաւորներն, անգլիացի հրապարակագիրները անբաւար կը բարձրացնեն. այո, զօրութեան, յառաջդիմութեան, ծաւալումի ծայրակէտը հասած Անգլիան իրապէս կը յետադիմէ այսօր, ու այդ յետադիմութիւնը ոչ իսկ մէկ քանի որոշ մասերու մէջ կը սահմանափակուի: Անգլիա կը յետադիմէ միանգամայն իր զօրութիւնը ու բարգաւաճութիւնը նպաստաւորող բոլոր առարկաներէն մէջ:

Տարւոյս ընթացքին մէջ, միջազգային համարաւոր ու հեղինակութեան տիրացած հրապարակագիր մը, Ժան Ֆրանս, Տիօրէն Լա Ռոպին հանդէսին, «Հիւանդ Անգլիան» վերնագրով ընդարձակ ուսումնասիրութիւն մը հրատարակեց, ուր «միմիայն անգլիական վիճակագրոյցներու և ողբերկերու դիմելով» մանրամասնօրէն կը քննէր ու կորոշէր մասնաւորապէս առեւտրական միջազգային յառաջդիմութեանց մէջ Անգլիոյ յետախաղաց ընկերութիւնը: Նախ, Անգլիա գերազանցօրէն բեղմնաւոր ու անապառ երկիրը եղած էր երկաթեղէն, պողպատեղէն, ածխային արտադրութեանց, որոնց շնորհիւ իր տիեզերական խորխոր գիրիչխանութիւնը հետզհետէ կը ծաւալէր. որդ, ինչպէս մեր քաղաքական վերջընթեր տեսութեան մէջ թուանշաններով ցոյց տուինք, Անգլիա այսօր շատ ու շատ ետ կը մնայ բաղդատմամբ Մ. Նա. հանգեցնող արտադրած նոյն ապրանքներու հետ, ըլլալ որակի,

Ա. ՇԻՏԱՆՆԱՆ

(23)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐԻՒՆԱԼԻ ԹՈՒԱԿԱՆԸ...

- Ո՛ւր է Տէր հայրը, հարցուց Վանական փոքրիկին մօտենալով:
- Տէր հայրը տունը չէ, պատասխանեց մանուկը՝ վերէն ի վար գիտեցով իր գէմը տնկուող մարդը:
- Վա՛յ, հապառ ո՛ւր է:
- Պարտէզն է, կուղե՞ս կանչեմ:
- Ձե՛, եթէ կուղես, այնտեղ տար զիս:
- Շատ աղէ՛կ, դուք մեր խոտը քաղելու եկա՞ր:
- Այդպէս է:
- Ո՛ւր տեղացի ես:
- Շատ հեռու է իմ երկիրս:
- Մանուկը չարուսակեց իր հարցումները: Մէկդի նետեց իր շինած արօրը, տրեխներուն կապը պնդեց ու ըսաւ.
- Եկու՛ր ետեւէս:
- Վանական հետեւեցաւ:

- Պարտէզը կը գտնուէր գեղէն դուռ, ամենէն գեղեցիկ գիրք ունեցող տեղը:
- Երբ պարտէզին մօտ հասան, մանուկը ձեռքը փայտէ ճպոտով հիւսուած դուռին ետեւը մտցուց սողնակը դուռն քաշեց ու բացաւ դռնը:
- Մտի՛ր, թոթովեց մանուկը:
- Վանական առաջ անցաւ: Մանուկը նորէն գոցեց դուռը ու վազելով հասաւ անոր ու ըսաւ.
- Կը տեսնե՞ս, ի՛նչ աղուոր ծառեր ունինք մենք:
- Իրա՛ւ է... շատ աղուոր են, մրմնջեց Վանական:
- Տէ՛, այդ ջով ծառին տակ պտուկեր է: Տէր Հայրը, կը նայի՞ս, նկատել տուաւ մանուկը:
- Վանական գէպի մատնանիջ բրած կողմը դարձուց աչքերն ու նշմարեց զայն:
- Վերապէս մօտեցան երկուքն ալ Տէր Օհանին որ՝ ծառի մը տակ, կանաչ խոտերուն վրայ ու զղզղուն առուի մը քով կը քնանար:
- Վանական խորին պատկառանքով ու անզուսպ կարօտով մը գիտեց այդ առաքինի մարդուն կերպարանքը: Օ՛հ, իրեն այնպէ՛ս եկաւ որ երկնային ճառագայթ մը պատած էր անոր ճակատը:
- Մէկէն ի մէկ չհամարձակեցաւ ձայն տալու. կարծես թէ չէր ուզեր անոր խաղաղ քունը վրդուել:
- Երկար, խորունկ ու դա՛ն մտածում մը իր հոգին կը լեցունէր, երբ կերեւակայէ թէ Տէր Օհանին պիտի լսէր գեղին բոլոր աղէտները:
- Տէր Օհան չարժու՛մ մը ըրաւ այդ պահուն ու աչքերը բացաւ:
- Տէր Հայր, մենք շատ սպասեցինք... մրմնջեց

- մանուկը՝ որ Վանականին պէս շարունակ անոր գէմը կը գիտէր:
- Տէր Օհան մանուկին պատասխանելու ատեն՝ յանկարծ ետին կեցող մարդուն վրայ նայեցաւ:
- Ո՛չ, չճանչցաւ... հետեւաբար ոտքի ելաւ ու հարցուց.
- Բ՞նչ կուղես, զաւա՛կս:
- Վանական դողդոջ... իր սիրտը լեցունող անհուն դուռով, սէրը, պաշտումը չկրցաւ զսպել որ կարենար կեղծել... այդ պատճառաւ մօտեցաւ Տէր Օհանին ու մրմնջեց.
- Ո՛հ, Տէր Հայր... աս որչա՛փ փոխուել եմ որ չկրցաւ ճանչնալ զիս... մի՛ խոսվուի՛ք, Վանականն եմ:
- Վանական... բացառանջեց Տէր Օհան ու դողդալով գրկին մէջ առաւ զինքը: Աստուած իմ, աչքերուս կերեւիս... կը խաբուի՞մ արդեօք:
- Ո՛չ, չէք խաբուիր... Վանականն եմ ես ու եկած եմ ձեր կարօտն առնելու:
- Ըսէ՛ ինձի, ի՞նչպէս եղաւ այդ:
- Ազատութիւնս:
- Այո:
- Աստուած... մրմնջեց Վանական:
- Տէր Օհան խնդրեց որ առեւակին մօտ նստի ու պատմէ իրեն թէ ո՛ւր կը գտնուէր մինչեւ այն ատեն:

(Շարունակելի)

ըլլալ քանակի տեսակետով, ըստ
բիւզիսի մ' քննակա՝ հիմնարկու-
թիւնները՝ շատ աւելի կոտորուած
գնեցող, շատ աւելի դիմացկուն
ապրանքներ կը մատակարարեն կտ.
մարջնեղու կամ վարչապետ մեքե-
նաներու շինութեանը համար. ու,
ինչպէս ժոռո ֆինո յիշատակելու
զանց չընեն, ոչ միայն բրիտանա-
կան բոլոր մեծ ու փոքր գաղթա-
վայրերը իրենց վարչապետները
Ամերիկայի կապալանէն, այլ նոյն
իսկ Անգլիոյ երկաթուղիի ընկե-
րութիւնները, նոյնիսկ կառավա-
րութեան ձեռքով շահագործուած.
ները, այսօր հարկադրուած են ի.
րենց վարչապետներու ապագան.
քին համար Ամերիկայի դիմել,
չլացած տեղութեան թէ գի-
մացկոտութեան տեսակետով անգ-
լիական աշխատանքներու վրայ ա.
նոնցինքն անհաղադարձ առաւելու-
թիւններէն: Նոյն բանը կը դիտ-
ուել մեքենական ուրիշ արտադրու-
թեանց վրայ ալ, ու հետաքրքրա-
շարժ վիճակացոյց մը կը հաստատէ
թէ, իրենց տպագրութեանց ահա-
գնութեամբը հանրածանօթ անգ-
լիական օրաթերթերու մեծամաս-
նութիւնը, թալանէն (որուն շըր-
շարքերութիւնը հեռի է հեղինա-
նակութեանը հաւաստելէ) մինչեւ
Տէյլի Մէյլ (որուն հեղինակու-
թիւնը հեռի է շըրջաբերութեանը
հաւաստելէ) Ամերիկայի արտադ-
րած մամուլներով, տառերով, նոյն
իսկ թուղթերով կը հրատարակ-
ուին: Գալով Անգլիոյ հանքած-
խային արտադրութեանցը—իր հա-
րատութիւններէն իւր—ոչ միայն
Ամերիկա, ինչպէս արդէն ցոյց
տուինք ուրիշ տեղ, զայն այս տե-
սակէտով ալ շատ ետ ձգեց, այլ
նոյն իսկ Գերմանիա այսօր ածու-
խի առեւտուրին մէջ Անգլիոյ հետ
յաջողապէս կը մրցի:

Անցնինք տարբեր չկոտորու-
թեան մը. Անգլիա իրաւամբ կըր-
նար պարծիլ իր առեւտրական նա-
ւատորմին ջախջախիչ կատարելու-
թեամբը, որ տեղեկութեան դարա-
ւոր սքանչացումի մը արժանացեր
էր. ինչ փոյթ թէ իր պահան-
ջումները գոհացնելու համար օ-
տար ապրանքներ ներածելու հար-
կադրուել էր. չէ՞ մի որ Անգլիա,
իր առեւտրական նաւատորմին շնոր-
հիւր, այդ ապրանքները նպաս-
տաւոր կերպով փոխադրելու միակ
ժողովուրդը կը մնար. չէ՞ մի որ
ժողովին կայսրութեան մականը
իր ձեռքին մէջը միշտ կը հանգ-
չէր. չէ՞ մի որ ունէ երկրի ա-
ռեւտրական բարգաւաճումը հար-
կաւորապէս իր միջնորդութեանը
կը կարօտէր:

Ինքնասիրական այս հմայիչ ա-
նուշխնորդ օրօրուողներ այսօր ալ
գուցէ գիւղ գտնուին. ու սակայն,
պաշտօնական վիճակացոյցներու
առջեւ ամէն տարակոյս կանհետի.
Գերմանիայէ զատ, որ սակայն
վերջին տասնամեայ ժամանակա-
միջոցի մը մէջ իր առեւտրական

նաւարկութեանը կատարելագործ-
եալ վիճակ մը տուաւ ու Անգլիոյ
առեւտրական միջազգային գերիշ-
խանութեան առաջին մահացու
հարուածները հասցուց. Մ. Նա-
հանգները իրենց կարգին այս հո-
ղին վրայ ալ այնքան երազ, այն-
քան հակադրապալ յառաջդիմու-
թիւններ ըրին, որ եթէ այսպէս
շարունակեն, պիտի կարողանան
ոչ միայն Անգլիոյ, այլ Եւրոպա-
կան երկիրներու միացեալ նաւա-
տորմին հետ իսկ յաջողապէս մըր-
ցիլ: Այս օրեր իսկ դէպք մը պա-
տահեցաւ, որ, տարակոյս չկայ,
ամէն գուշակութիւններէ պերճա-
խօս է: Ամերիկացի միլիտանտէր
մը, Բիւքսթոն Մօսկան, դրաւտնե-
ներու ամենէն հաճախաւոր կազ-
մակերպիչներէն մէկը, շնորհիւ իր
հսկայ դրամագլխին ու վարկին,
Ատլանտիան Ովկէանոսի բոլոր շը-
գենաւային ընկերութիւնները միա-
սին ձուլելով ու զանոնք իր հովա-
նաւորութեանը ներքեւ առնելով,
յաջողեցաւ, սանկ մէկ հարուածով,
Ատլանտեանի առեւտրական կայս-
րութիւնը անգլիական ժողովուր-
դին ձեռքէն ամերիկեան մէկ քանի
դրամատէրներու ձեռքը փոխադ-
րել:

Մը. Մօսկան իր նաւարկու-
թեան դրաւտնէն մէջ համախմբեց
80 անգլիական նաւ, ամէնքը
616,764 թօն, 37 ամերիկեան
նաւ, ամէնքը 262,798 թօն, 262
օտար նաւ, ամէնքը 1,300,518
թօն: Այս հսկայ ձեռնարկին յա-
ջողութիւնը Անգլիան ստրասպի-
ցուց. Մը. Պալֆուր, յանուն կա-
ռավարութեան, շոգենաւային Գիւ-
նառ ընկերութեան հետ բանակ-
ցութեան մտնելով, հազիւ թէ
տոբեկան 3,750,000 ֆրանքի դրա-
մանպատով մը կըրցաւ արգիլել որ
այս ընկերութեան 18 նաւերն ալ
Մօսկանի դրաւտնէն մէջ չանհե-
տէին:

Կայսրութեան առեւտրական
փուլումը շտապելու սպառնա-
ցող այս ստոյգ վտանգներու դէմ,
բրիտանական առեւտր յուսահատ
ճիգեր կընէ. երկրին մէկ կարեւոր
դասակարգը, անգլիական կայսերա-
կանութեան համաբաւարար ախոյեան
Չէմպլըյէնի հետ, իրերու վիճակին
իւր դարձան՝ դէպի մաքսապաշտ
քաղաքականութեան վերադարձ մը
կը ջատագովէ. գաղթային նա-
խարարը Մը. Չէմպլըյէն այս առ-
թիւ յղացեր էր հսկայ ծրագիր
մը, տեսակ մը կայսերական միջ-
գաղթային Զօրվերայն (մաքսային
դաշնակցութիւն), որուն յաջողու-
թիւնը Անգլիական ոստանը իր
գաղթավայրերուն հետ առեւտրա-
կան դաշնագրով մը պիտի կապէր,
ի վնաս օտար երկրներու: Սա-
կայն, այս ծրագիրն ալ, որուն
վրայ շատեր յոյսերն զուր էին,
Չուրը ինկաւ քանի մը ամիս առաջ
Լոնտոն գումարուած գաղթավայր-
ներու նախարարապետներուն հա-
մաժողովին մէջ:

Տ. Է.

ՅԱՆՅԱՆԲԸ ՈՐՈՒՆ Է

Ե.

Վառնայի Հ. Յեղ. Դաշնակցութեան
«Արշալոյս» Մասնախմբի
գեղճառները

Արդէն ժողովուրդին մէկ մասը իսկ
Վառնայի գրէթէ ամբողջ հայութիւնը
գիտէր թէ, «Վարդ-Պատրիքով»
«Իսակ-Արմախի» «Վարդ» ըստած
անբարոյական տղեկի ճակտին խարա-
կած էի ԽԱՉԱԳՈՂ բառը՝ որ ցմահ
անջնջելի պիտի մնար:

Իրերու այս չիտթ կացութեան մէջ
«Արշալոյս» մասնախմբի անդամուհի-
ները պատիւ ըրին ինձ ծանօթացնել զիս
իրենց ձեռքը ունեցած թուղթերուն:
Պէտք է ըսել թէ թուղթերը մեզ ներ-
կայացնելէ առաջ, բերանացի պարզե-
ցին թէ Վարդօն իրենց վստահու-
թիւնն ինչպէս շարաշար գործածած
էր եւ որպիսի գումար մը իւրացուցած
էր իրենց հաւաքած դրամներէն:

Մասնախմբի թուղթերն եւ սոմարն
ուշի ուշով կարդալէս վերջ, պէտք ե-
ղած բերանացի բացատրութիւններն
եւս առի. արդէն այդ բացատրու-
թեանց հարկ չկար, քանի որ այդ
սոքիւմանները շատ պարզ եւ մեկին
կերպով ցոյց կուտային Վարդօ թըր-
ուառին եւ իր ձագուկը Օ. Գ. Բ. բրած
գեղճառները. պէտք է հոս յիշել թէ՛
Օ. Գ. Վառնայի գոմիթէի մշտական
եւ անփոփոխելի անդամն եղած էր.
գոմիթէ ըսելով պէտք էր Վարդօ
հասկնալ եւ գոմիթէի կնիքը մշտա-
կան կերպով Վարդօյի քովն էր:
Այժմ մեզ կը մնայ մեր ազնիւ ընթեր-
ցողները մասամբ ծանօթացնել Տիկ-
նանց մասնախմբի գործերուն եւ
ձեռքն ունեցած թուղթերուն հետ:

Մասնախմբը կազմուած է եղեր
Վառնայի կարգ մը Տիկնաներէ եւ Օ-
րիւրներէ Հայ Յեղ. Դաշնակցութեան
օժանդակելու համար: Մասնախմբը
իր անդամուհիներէն հաւաքած առա-
վճարները եւ նուէրները կը յանձնէ
Վարդօյին, որպէս զի նորա միջոցաւ
ժընձ վրկուին եւ Դրօշակի մէջ հրա-
տարակուին որոշուած կեղծ անունե-
րով:

Վարդօն ամէն տուն Տիկնանց ժո-
ղովներուն ներկայ կը գտնուի եւ եր-
բեմն ալ Օ. Գ. Բ. մարդը գործունէու-
թիւնը Վարդօյի հրահանգով կրկնայ:

Տիկնաները վիճակահանութիւն մը
կը սարքեն 1,000 ֆրանքի. այդ վիճա-
կահանութեան տոմսակներէն 600ի
չափ կը ծախուի, իւրաքանչիւր տոմ-
սակը մէկ ֆրանքի: Դրամները նոյն-
պէս կը յանձնուին Վարդօյի, որ եր-
բեմն պաշտօնական ընկալագիր կու-
տայ գոմիթէի կողմէն եւ երբեմն ալ
անպաշտօն ընկալագիր, այնպիսի ան-
ճոռնի եւ խայտառակ կերպով որ ա-
մենատգէտ անհատներ իսկ այդ տե-
սակ ընկալագիր չեն տար:

Տիկնանց մասնախմբը նուազա-
հանդէս մը կը սարքէ եւ նուազահա-
նդէսին յատկացեալ 800 ֆրանքի տոմ-
սակ կը տպագրէ. այդ տոմսակները
ամբողջապէս կը սպառին. Վարդօն կը
յանդգնի իր լրբութեամբ Տիկնանց
իրաւունքն եւ իրաւասութիւնը խել
ձեռքերուն. այսինքն չը թոյլատրեր
որ Տիկնաները տոմսակները ծախեն եւ
զրամները առնեն: Տոմսակները ինքը,
Օ. Գ. Բ. եւ կարգ մը իրեն ընկերու-
րուն միջոցաւ կը ծախէ եւ գրամները
ինք կը գրպանէ:

Յ. ՆԱՄԻԿԵԱՆ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարինի Առաջնորդ Զաւէն վար-
դապետ, երկրաշարժէ վնասուած
եկեղեցւոյն շինութեան համար
շնորհուած կայսերական իրաւուն
ընդունելով, անմիջապէս եկեղեց-
ւոյն նորոգութեանը ձեռնարկել է:

— Ամերիկուհի Միս Գօրինա
Շաթըզ, որ Երեւանի մէջ բաւա-
կան թուով հայուհիներու անդ-
նանկարի յատուկ գործեր կը հայ-
թայթէր, վերջերս Պիլէճիք գիւ-
ղաքաղաքին մէջ եւս ճիւղ մը բա-
նալու ձեռնարկեր է տեղւոյն
հայուհիներուն ալ գործ եւ ապ-
րուստ հայթայթելու համար: Գոր-
ծաւորուհիները 40 հատ պիտի ըլ-
լան, 25ը հայ եւ 15ը հայ-բողո-
քական ըլլալու պայմանաւ, վար-
պետուհին, հայուհի մը, արդէն
Պիլէճիք հասեր ու Միս Գ. Շա-
թըզի յանձնարարութեան համա-
ձայն աշխատութեանց ձեռնար-
կեր է:

— Գէօթահայի Տեղապահ
Միկրտիչ վարդապետ Ապահունի
կրկին անգամ ըլլալով Աֆիոն Գա-
րահիսարի ծանօթ հրկիզեալնե-
րուն ողբալի վիճակին վրայ Պատ-
րիարքարանի ուշադրութիւնը
հրաւիրել է:

— Բալուի նորընտիր Առաջնորդ՝
Ազան վարդապետ, Դպրեմանքի
աւարտականներէն, կը պատրաս-
տուի իր պաշտօնավայրը մեկնիլ:

— Սելանիկի մէջ ելեղեցւոյ մը
կառուցման համար կայսերական
արտօնութիւն խնդրուած է: Երբ
այս արտօնութիւնը ձեռք բերուի,
Պատրիարքը տեղւոյն հոգեւոր հո-
վիւ Չլաւտեան քահանայի առա-
ջարկութեան վրայ, շինութեանց
ձեռնարկուելու հաւար, նուիրա-
հաւաքութեանց կոնդակ մը պիտի
ղրկէ:

— Գարաքիլիսէ վախճանուած
Խ. Արովեան անունով բարերար
մը տեղւոյն Հայոց եկեղեցւոյն շի-
նութեան համար 4 խանութ եւ
2,000 ռուպլի դրամ նուէր ձգեր
է: Այս նուիրատուութենէ
զատ, հանգուցեալ բարերարը, իր
կարողութեանը ներած չափով,
Մայր Աթոռին ու բարեգործական
ուրիշ հիմնարկութեանց ալ բա-
ժիններ հանել է:

— Մեր նախորդ թուով ծա-
նուցեր էինք իզմիրցի առաջնա-
կարգ վաճառական Մատթէոսէ ֆ.
Պալեօղեանի սպանութիւնը, Հան-
գուցեալը ժամանակին կեսարիոյ
Ս. Կարապետ վանքին 1,500 ոս-
կիի չափ պարտքը ինքնաբերաբար
վճարել էր եւ Հայաստանի մեծ սո-
վին տունն ալ իր առատ նպաստ-
ներովը նշանաւոր եղեր էր: Իր
հարստութիւնը 4,400,000 ֆրանքի
մօտ կը գնահատուի:

Հանգուցեալին յուղարկաւորու-
թիւնը շատ փառաւոր եղեր է.
200է աւելի կառքեր զագաղին հե-
տեւած են, որոնց մէջ գտնուած

են բոլոր օտար հիւպատոսները և քաղաքին առեւտրական և սեղանաւորական բարձր դասակարգը :

Սերվերի ըսածին նայելով, մարդասպանը ամիս ու կէս առաջ ալ Պարսկաստանէ մահու սպառնալիքով 500 ոսկի պահանջեր է : Բիւզանդիոն ալ սպանութեան տուած իւր հետեւեալը կը գրէ . «Անգլո-թուրքական պայմանագրէն ետք, որ ալ անմեղ մարդուն աւերելը թափեց, օտարականի մը յատուկ տգիտութեամբը զարկաւ կեանք մը որ հարիւրաւոր կեանքերու նեցուկն էր, որ շատ խեղճեր միմեքեան էր, գիւղ մի քանի շաբաթ առաջ նոր նուէրներ ըրած էր իր պատկանած համայնքին, և իր դրամը չէր զլացած հիմնաւոր և ողջամիտ կերպով հանրագումար և է ձեռնարկ » :

— Վառնայի Որբախնամ Ընկերութիւնը շնորհակալութեամբ հրատարակութեան կուտայ հետեւեալ նուիրատուութիւնները . — Երուսաղէմի Միքայէլեան, 4 ֆրանք . Հայրապետ Սարգիսեան 4 ֆրանք . Նիկողոս Քիւչիւքեան 1 ֆրանք . Տիւրան Բովհանէսեան 5 ֆրանք . Մուշեղ Արծրունի (Սօֆիա) 25 ֆրանք . Տիգրան Ճգնաւորեանի միջոցաւ գարոցի մը սաներէն հաւաքուած 22 ֆրանք . Լամբոյլ գումար 61 ֆրանք արծաթ :

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սօֆիատան հոկտ. 23 թարիխի իւր թանա շու եօլտա մարիւմաթ վէրիւմիշ տիր :

«Մաքէթոնիալը չէթէլէր թիւրք սաքէրլէրինտէն կէրի սիւրիւլէրէք մէկպուր օլտըլար քրէզնա կէչիտինտէն Սթրումայա կէչմէյէ վէ պաշաւըլար Բէրիւմ, Բօտօր վէ Տէնթօթ տաղը պէյնիտէ պուլընան Բասօլի ճիվարընտա տաղըլմայա վէ Պուկարիա սինօրընա կիրմէկէ : Եու հալտէ ըսեան խիթամ պուլմուշ տէմէք տիր :

«Գօճազարը էլպիսէսի իւր Բիւլօտսն Մաքէթոնիայա կէչմիշ օլան ժէնէրալ Զօնչէվ հէման տէր : հալ Պուկարիայա ալտէթ իթմիշ տիր : Միրալայ Եանքօվ քէզա գայմազամ Նիքօլով թուրքուլմալը օլուպ, էլան Մաքէթոնիատա պուլընըլար :

«Թիւրք սաքէրի էմր գապուլ իթտի քի տալըլարըն ինպարը իւր սիւրհ ալմըլ օլանլարա պախուսուս Պուկարիա գարըլ թէգիթաթ տա պուլընմասըլար : Մէմուրլար տախի իսլամ էհալի թէսքին իթմէք իչիւն թալիմաթ վէրիւմիշ տիր : պախուսուս Բօմալըլար խըրիսթիանլարա գարըլ բէք հիտ տէթէնմիշ տիրէր : Եայանը թաաճուպ տըրքի Մաքէթոնիատա

Բուլար բէք չօք օլտըլարը հալտէ Պուկարիա անլէրլէ խասիմանէ տալըլարըլար :

«Թէսալիայի ֆէթհ իտէն էթհէմ բաշա Մաքէթոնիա օլտըլարնա սէրգօմանտան թային օլընտաճաք տրր :

«Սուլթան պէօլիք էհէմմիլէթ վէրիւմ Բէնս ֆէրտինանտըն Սթանպուլը զիյարէթ իթմէսինէ, պուլըն Մաքէթոնիա գարըլըլըլըլընը գաթիէն պուստըրմաք իչիւն եարտըլ օլաճաք գանն իտէլօր » :

— Թան պիր Աստորիա կաղէթաւընտան նազլէն, կէօեա Սուլթանըն էօմրիւնէ պիր սուր գաթ տախի վուգուա կէլտիկինի շիւրհէլի սուրէթտէ եազիօր : Եէօլլէ քի սօն ճուճաա կիւնիւ Սուլթան Երտըլ քէօշիւն պիր տիվանհա նէսինտէն էլէր իքէն, սէրալըն սէյիս պաշըլը գըլաթիթի վէ ֆօրմալը իւր պիր քիմսէ տըլուհալ թաղտիմ իթմէք պէհանէսի իւր Սուլթանըն գարըլըլընա չըգմըլ :

Սուլթանըն նէֆսինին մուհսփըլը օլան եալէրլէր տալմըլ թուլարըլ վէ անլարըլըլ օլթէպտիլի գըլաթիթ պիր էնէպի իմիշ : իւզէրինտէ գիր պըլադ վէ պիր լէվօլլէր պուլընմըլ տըլ : Հիւքիւմէթ մէրգուլը Մաքէթոնիա գօմիթէսինին պիր մէմուրը գանն իտէր իմիշ :

— Պսհըր Ահմէտէ արապ գուրսանլարըն հիւճուլը սէպէ քի իւր թիւրքիա վէ իթալիա արաքընտա հուսուլա կէլէն իխթիլաթըն շու եօլտա հալ օլընտըլը Սթանպուլտան պիւրիլիմիշ տիր : Պապը Ալի մէլըլըլ տէնիլտէն գուրսանլարըլ քաղլայաճաք վէ Մարիա թէրէզա նամ իթալիա վարօրըն սահիպինէ 19,000 տուլար թաղմիւմաթ վէրէ : Եէք տիր :

ՏԱԼԻԼԻԹԷ

Պուկար հիւքիւմէթի պէօլիւք տէօվէթլէրէ պիր նօթա եօլալմըլ օլուպ, անընէ Մաքէթոնիա իխթիլալընա Պուկարիանըն գուվէթ վէրմէսինէ տայիթ թիւրքլէրին իխթալաթը էսասըլ օլտըլըլըլ պէյան իթմիշ տիր : քէզա Մաքէթէթոնիա աշվալընըն թէհիլէք սինի տէօվէթլէրին տըգաթընա իհալէ իւր, Պէրլին աշտնամէսի մուճիպինճէ իսլահաթըն ինրա օլընմասընը թայէպ իթմիշ վէ աքսի հալտէ Մաքէթոնիա իչիւն Պուկարիատա վուգուա կէլէնէք գալըլըլըլըն էօնիւ ալամայաճաղընը իխթար էլլէմիշ տիր :

— Միւլէթֆա Սթամպուլըլըն գաթլընտան տուլարը մաղնուս պուլընան Սթաթիկին տալալը Սօֆիա ճինայէթ մահքէմէսինտէ Հոկտեմբեր 11 տէրուլէթ օլընտը : Մաղնուլը մէրգում Միխայիլ Սթամպուլ, նամը տիկէրլէ հալտու իտամա մահքիւմ օլմուշ տըլ :

— Բազար կիւնիւ չէհրիմիլ պէլէտիլէ գօնաղընըն էօնիւնտէ պէօլիւք պիր միթինիլ թէճէմմիւ օլընտը : իչպու միթինիլտէ իրաւոր նուլթ իտէնէլէր, ախիլէն Եուլան հիւքիւմէթինին թէվգըֆ իթմիշ օլտըլըլ Տօթթ : Գաթարճիէվին թալիլէսինի իտտա իւր, Սէլա նիքտէ պիր Բուլըն գաթլ մաա տէսինտէն տուլար անա աթֆ օլընան միւլիմիլէթին իֆիթիւրատան իպարէթ օլտըլընը իլգահ էլլէտիլէր : քէզա Տօթթ : Գաթարճիէվին թէվգըֆը մաա տէսի պուլկար էֆէհարընը ալէֆլէնտիլմիշ օլմաղլէ նուլթ գէօլլէյէնլէր էսկի թէֆտէրլէրի տալիլ հօլալայալաք, վաղթընտա ֆէնէրիօտլարըն վէրուլ րահիպլէրին պուկար միլլէթինէ գարըլ ինրա իթտիլէրի գուլուլըլըլ գիքը իթտիլէր : Պալըլարը իսէ Պուլիւրիատա պուլընան Բուլարը գօվմաք, մէմուլըլէթտէն թարտ իթմէք, անլէրին իտարէսի ալթընտա պուլընան իտաթմահանէ վէ քիլիսլէրի զապթ էլլէմէք թարլընտա պիր չօք հիտ տէթլի միւքիւմէթտէ պուլընտըլար :

Իչպու նուլթ գալարը տիլլէլէն է հալի Տիւլիլիլ ինքուսանլարալալ օլըլմաղտ օլուպ հէման պիր նիւմայիշ գուհուրինտէն գօրգուլմաղտա ըրը :

Ֆաթաթ Միւլէֆէ միւտէպ, պէրանէ տալիւնուպ, էհսլինին էֆէհարընը թէսքին իթմէք իչիւն պիր գաշ նասահաթ իւր պէրապէր Տօթթ : Գաթարճիէվին սէրպէթ պըրաղըլըլ օլտըլընա տայլը Սօֆիատան ըհսմի թէլէկրաֆ գապուլ իթտիլինի պէյան էլլէտի : Պուլըն իւզէրինէ էհալի սիւքիւնէթլէ տաղըլտը : ֆաթաթ պուլմէսլէ Պուկարիարըն գալպինտէ Բուլարա գարըլ աաալէթի եէնիտէն ուլանտըլըլ օլտու :

ԱԼՄԱՆԻԱ

Բայիստակտա եէնի կէօմրիւկ թարիֆէսինին հիւքիւմէթին արգուլը խիլաթընա օլտարաք գապուլ օլընմասըլըլ իմբէրաթօրը հիտտէթլէնտիլմիշ կէօրիւնիօր : Պուլ սէպէպլէ վիլլէլա ըլիսի Գօնթ Պիւլով սօն ինտիմատա Բայիստակտա պուլընմայուպ իմբէրաթօրըն եանընա Բարթստամա կիթմիշ տիր : մէմուլաթա կէօրէ, իմբէրաթօր Բայիստակտա տաղըլմաք էֆէհարընտա օլտըլըլտան Պիւլովը նէգտինէ չաղըլմըլ :

ՍԵՐՊԻԱ

Սըրպ կաղէթաճըլարը գօնկրէ թէճէմմիւ իթմիշլէր տիր, իչպու գօնկրէտէ Սերպիա տալիլինտէրի կաղէթաճըլարտան մաա տալիլէր մէմալիքտէ եանի Հէրսէքտէ վէ Հոնգարիատա պուլընան Սըրպլար տալիլ մուրախաս կէօնտէրմիշլէր : Հիւքիւմէթ գօնկրէնին

թէճէմմիւսինէ եալընըլ շու շարթլէրուխասաթ վէրմիշ տիր քի բօլիթիգա մէսլէլէրի մէվգուի պահս օլընմասըն : ֆաթաթ մուրախասլար խուսուսի միւլէթէրլէրլէ բօլիթիգա էֆէհարըլարըն պիրպիրլէրինէ իլգահ վէ օլպապտա իթիլաֆ հասըլ իթմէկէ մէյտան պուլընաղլար տրր :

ՍՐԱՀ "ՍԱՆԴՐԱԼ"

Վաղը, հինգշաբթի գիշեր Նասիփս (Թոյս) հայ գերասանական խումբը պիտի ներկայացնէ «Անմեղ Հացագործը» սրտաշարժ թատերախաղը, 3 արար :

«Օտուհնի Իվան աղա» ծիծաղաշարժ զաւելշտ 2 արար :

Գիւնեթ . — Օրեալի, թիւ 1 ֆր. 8, թիւ 2, 3, 4, 5 ֆր. 5, թիւ 6, 7 ֆր. 4, — Ա կարգ 1.25 ֆրանք, Ա. կարգ 1 ֆրանք, իսկ կանանց համար 50 սանթիմ, Բ. կարգ 5) սանթիմ, կալէրի 30 սանթիմ :

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԵՐԿՐԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-ԿԱԿԱՆ : Այս երգարանը Բ. անգամ տպագրուելով աւելի ճոխացած ու բարեփոխուած է, եւ հակառակ գնոյն ածանութեանը կը պարուհակէ ազգային հին ու նոր խիստ շատ երգեր :

ՆէՏԱ կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱՆԸ, Պուկարիոյ ազատութենէն առաջ Պուկար գիւղացիին Թուրքիէ կըրած տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ Եւրոպայի տաքքրակին :

Գիւն 50 ՍԱՆԹ. ՀԱՅԵՆԻԳԻ ԶՈՆԵՐ, Պատկեր մը Տաճկաստանի իրական կեանքէն, գրեց Ղ. Նանապետեան :

Զեղչեալ Գիւն 1 Ֆր. Այս գիրքերը առանալու համար պէտք է դիմել Իրաւունքի խնամարարութեան, բոսթի ծախքը 10 սկանսանթիմ միատեղ զրկելով : իսկ գիրքերու արժէքին համար, եթէ ուրիշ գիրքութիւններ պակսին, կընդունուի նամակագրօժ 10 0/0 գեղըլով :

ԶՐԻ ԾԱՆՈՒՅՈՒՄ ԶԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻՐ

Պաշտօնական ազդեռու տղը (25 սան) 10 սանդիմ : Անհասական ազդեռու տղը (25 սան) 20 սանդիմ : Երեխանքանի աւելիի համար 20 0/0 գեղ : Փոխադրելը դրամ կամ եւանկալորշըլ դրիւլ կանխիկ :

ԿԱԶՄԱՐԱՐԱՏՈՒՆ « ԲԱՖՅԻ »

Վառնա ուղիցա Շիպլէնկա Կը կազմուին խնամքով ամէն տեսակ գիրքեր, տետրակներ եւ տոմարներ վաճառականական, գիւրամատչելի գրքերով : Յանձնարարութիւններ կը կատարուին չուտով : 4—5

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войняковъ—Варна